

## Ա Ե Մ Ս Ր Ո Ւ Ե Տ Ա Ր Ե Գ Ո Բ 2.

---

Ամեն տարի Ա. Գէորգ զօրավարի տօնին Ա. Էջմիածնայ միաբանները և ձեմարանի սաները մեծ հանդիսով կառարում են ձեմարանի հիմնարկութեան նշանաւոր տարեգարձը։ Այս տարի այդ տօնը ընկաւ Օեպտեմբերի 25-ին, բայց որովհետեւ հետեւեալ օրը ամսի 26-ին պէտք է Մայր Տաճարում տեղի ունենար ամենայն Հայոց Կաթուղիկոս Մկրտիչ Ա. հանդիսաւոր ս. օժման խորհուրդը, ուստի ձեմարանի տարեգարձի հանդէսը յարմար համարուեց յետաձգել մինչեւ հոկտեմբ. 9-ը Ա. Թարգմանչաց տօնը։

Կէս օրուայ պատարագից յետոյ, որին ներկայ էր Նորին Վեհափառութիւնը, բոլոր միաբանները շուրջառ առած հանդիսով դուրս եկան Տաճարից և երգելով «Որ յանէից» շարականը եկան Գէորգ Դ. Կաթուղիկոսի գերեզմանի վերայ և ըստ սովորութեան հոգեհանգիստ կատարեցին, հանդիսագիրն էր Նորին Վեհափառութիւնը։ Հանգուցեալի գերեզմանը զարդարած էր ծաղիկներով։ Հոգեհանգստից յետոյ աշակերտները համբուրեցին իրենց մեծ բարերարի գերեզմանը, իսկ շատերն էլ իրեւ յիշատակ մի մի ծաղիկ վերցնելով՝ հեռացան։ Վեհափառը խոստացել էր ներկայ լինել նաև ձեմարանում կատարուելիք հանդիսին, ուր տեղի պիտի ունենար մի տարուայ ձեմարանում կատարուած գործունէութեան հաշուետուութիւնը։ Ձեմարանը, նրա բակը զարդարած էին և այդ տեղ էր յատուկ տեղ պատրաստած ընդունելու Նորին Վեհափառութեանը և հանդիսատեսներին։ Վերջին ներս մեծ բազմութեամբ հոգեհանգստից անմիջապէս յետոյ եկել հաւաքուել էին և սոլասում էին Նորին Վեհափառութեանը,

որի գալով հանդէսը բացուէր. սակայն յայտնուեց, որ նա կարգադրել է ուշացնել հանդէսը և ժամը երեքին կատարել:

Նոյն բազմութիւնը կրկին անգամ հաւաքուեց ժամի երեքին: Նորին վեհափառութիւնը եպիսկոպոսների և վարդապետների ուղեկցութեամբ բարեհանեց շնորհ բերել նշանակեալ ժամանակին և իւր ներկայութեամբ կատարել տալ հսնդէսը: Երբ վեհափառը բազմեց, աշակերտները սկսեցին երգել «Որ զշնորհս ասուածային» թարգմանչաց շարականը: Ապա տեսչի օգնական իրաւաբանութեան կանդիտատ պ. Սաղաթելեանը ամբիոն բարձրանալով կարգաց մի ճառ: Ճառի մէջ նա շօշափեց մի քանի խնդիրներ, որոնք իւր կարծիքով արդէն հասունացած են և ժամանակ է իրագործելու: Այդ խնդիրներն են. Ճեմարանի ծրագիրը համապատասխան չէ ներկայ պահանջներին, հարկաւոր է հրաւիրել յայտնի գիտնականներ, պրօֆեսօրներ և նոր ծրագիր պատրաստել տալ: Ճեմարանի շինութիւնը մեծ պակասութիւններ ունի, դասարանները փոքր են և անյարմար, պէտք է մուածել դրա մասին ես: Իրաւամբ շատ ուշադրութեան արժանի խնդիրներ են, բայց, մեր կարծիքով, վատ չէր լինիլ աւելացնել նաև — ճեմարանում աւանդելիք առարկաների համար հարկաւոր է այնպիսի մասնագէտներ հրաւիրել որոնք ուսումնասիրած են իւրեանց ուսուցանելի առարկան և ոչ թէ՝ դիցուք մատեմատիկոսը աշխարհագրութիւն դասաւանդէր կամ իրաւաբանը գրականութիւն: Ծրագրի կազմակերպութիւնը բնականաբար մեծ նշանակութիւն ունի մի հիմնարկութեան յաջողութեան վերաբերմամբ, բայց գլխաւորը ծրագրի գործադրողներն են: Մեր բոլոր ուսումնարանների անդաշողութեան բուն աղբիւրը իսկապէս աւելի վարիչների թուլութիւնիցն է քան ծրագրի անյաջող կազմելուց: Հին ճշմարտութիւն է — մասգործին չը պիտի տալ կօշկակարի պաշտօն: Պ. ճառախօսը շօշափեց նաև մի քանի քաղաքակըրթութեան վերաբերեալ կէտեր, թէ ինչ եղանակով են եւրոպական ազգերն առաջ գնում և շեշտեց մի քանի կէտեր, այն է — նոցա յառաջադիմութեան գաղտնիքը պէտք է որոնել բնական գիտութեանց զարգացման մէջ և որ այդ գիտութեանց

շնորհիւն է, որ մենք այսօր ունինք հեռախոս, հեռագիր և լուսացուցիչ:

Այդ ընդհանուր գծերից յետոյ նա ասաց որ իւր տեղեկագրի մէջ յիշուած են մի առ մի ուսուցիչների թիւր, նոցա դասաւանդած առարկաները, աշակերտների անունները, փոխադրութիւնը, տնտեսական հաշիւներ և ճեմարանի շինութիւնները: Գալով ճեմարանական տարուայ ներքին կեանքին, յիշեց որ տարին խաղաղ է անցել, բացի մի գէպքից մի ուսուցչի և վերակացուի մէջ, որի հետեւանքը եղել է վերջինի հեռանուլը: Ուրիշ գէպքեր բնականաբար աւելորդ էին յիշուելու... Աշակերտների մէջ նկատուել է ինքնօգնութեան հետքեր, նոքա պակաս գրքերը իրանք են գնել սեփական փողերով և կարդալուց յետոյ նուիրել ձեմարանի մատենագարանին: Մենք թոյլ ենք տալիս հարցնելու, եթէ մատենագարանում ամենասովորական գրքերը պակասում են և աշակերտի գիրք գնելը յառաջադիմութիւն է նկատմամբ իրկապէս ի՞նչ է պատճառը՝ որ ցանկացած գրքերը չեն գնուած. չէ՞ որ վանքի կողմից պատրաստակամութիւն է եղել գրքերի համար վճարել: «Իղձէ՞ և փափագներ» յայտնել իրաւամբ շատ գովելի յատկութիւն է, բայց աւելի գովելին գործն է:

Յոյս ունենք որ ալ տեսչի օգնականի տեղեկագիրը հրատարակուելով, ընթերցողներն աւելի որոշ գաղափար կը կազմեն ճեմարանի մի տարուայ գործունէութեան մասին: — Այդ ճառափից յետոյ աշակերտները երգեցին «Ո՞չ զի չքնաղ», երգը, որ յօրինուած է յանուն գէորգ Դ. Կաթողիկոսի: Գ. լսարանի մի ուսանող ճառ խօսեց և ապա երգեցին մի քանի երգեր: Դ. դասարանցի մի աշակերտ կարդաց իւր շաբադրած մի ուսանուորը վերջը վեհափառը կանգնելով պարզ և հասկանալի ամենքին խօսեց հետեւալը.

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԸ ԽՈՍՈՒՄ Է.

Դուք խօսեցաք վերացական բաներու մասին, ես էլ կը խօսեմ մարմնացեալ բաներու մասին։ Այս օրուայ հանդէս մեր մտքին, մեր աչքին առաջ է։ անի յիշատակ մը մեր մէջ առաջ կը բերէ. այդ յիշատակ կենդանի մարդու յիշատակ չէ, պատկեր չէ, նա հողի տակն է, այդ յիշատակ Գէորգ Դ-րդ Կաթողիկոսի յիշատակն է. անի մեռեր գնացեր է, սոսօր անոր գերեզմանիդ վրայ հոգեհանգիստ կատարեցինք։ Այն ատեն մտքէս անցաւ, թէ Հայրիկ, օր մ'ալ քո գերեզմանիդ վրայ կը գան և հոգեհանգիստ կը կատարեն. Դուն էլ պիտի մեռնիա։

Գէորգ Դ-ը գիրք չէ գրեր, նա հիմներ է այս դպրոց, որու միջէն գիրք գրողներ կենեն. այս է անոր յիշատակ։ Շատ անդամ երբ գերեզմաններուն մէջ ման կը գանք, տապանաքարերուն վերայ կը կարդանք. «Ե.յս է տապան հանգստեան այս ինչին, այն ինչին», անոնք մեռեր գնացեր են և միայն այդքան կը յիշատակուին։ Եւրոպայ եղողներն տեսած են, թէ ինչպէս քաղաքներու մէջ կոթողներ, արձաններ են կանգնեցուցած, ատոնք բոլորն էլ մի մի յիշատակ են. և կան թէ մարդիկ ինչ բան ըրած են։ Վզգին մէջ շատերը կը մեռնեն, բայց ազգին շատ փոքր մասը յիշատակութեան արժանի կը լինի. իսկ մեծ մասամբ անյիշատակ կերթան։ Գէորգ Գ. մի յիշատակ թողել է ԿԾմիածնայ մէջ. այդ չի մեռնիր, անմահ կը մնայ. ահաւասիկ սաներ, որոնք այստեղ գիտութիւն կը սովորեն, վերջը կեր-

թան քաղաքներ, գիւղեր, և ուր որ անոնք լինին  
կը յիշուի Ըստը անունը, կասուի որ Շեմարանի  
սաներէն է: Ուրեմն օրհնեալ լինի Գէորգ կա-  
թողիկոսի յիշատակ երանի թէ ամեն մարդ եր-  
թալէն առաջ յիշատակ մը թողնէ իր անուան հա-  
մար: Ես ալ շատ կը մտածեմ յիշատակ թողնել և  
այնպէս երթալ Երանի, հազար երանի այն մարդ-  
կան, որ ազգին մէջ յիշատակ կը թողնէ. Վեր ե-  
կեղեցին էլ իւր խնդրուածոց մէջ կըսէ՝ «յիշատակն  
արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ես էլ կասեմ: յի-  
շատակն Գէորգ կաթողիկոսի օրհնութեամբ ե-  
ղիցի:

Վենք հիմա եկեր ենք այստեղ, մեր պարտքն է  
պահպանել այս հիմնարկութիւն. ինք որչափ աշ-  
խատեր է, որչափ տքներ է, մենք միայն պիտի պահ-  
պանենք: Վմեն տարի այս հանդէս կրկնուած է և  
ամեն անգամ կրկնուած էն այս խօսքեր: Վենք էլ  
աղօթենք, որ Վստուած Հայոց աղգի մէջէն շատ  
մարդիկ հանէ, որ ամեն ոք մէկ մէկ յիշատակ թող-  
նէ, այն ատեն ազգը երջանիկ կը լինի:

Հիմա գանք Շեմարանի նպատակին: Պ. Վա-  
ղաթելեան աղուոր խօսքերով Ճառ մը գրեր է, ո-  
րուն մէջ շատ աշխատած է գիտութիւն ու կրօն  
հաշտեցնել իրար հետ: Ըստնք սկիզբէն միշտ  
հաշտ եղած են. մարդիկներն են որ կը զատեն: Հայոց  
իմանալու է՝ գիտութիւնը ոբոշել. կրնամ ըսել ես ալ  
գիտեմ թէ ինչ կընէ գիտութիւն: Երբ ես թղթին  
վերայ կը զրեմ մի քանի խօսք, և այդ խօսքեր հեշտու-  
թեամբ կը հաղորդեն Աթանազու Երուսաղէմ են.

շատ տեղեր, այդ բաներուն մարդիկ իրենց խելքով հասած են: Երբ Հայաստանին մէջ առաջին անգամ հեռագիր շինեցին, քրդերը կը կարծէին թէ անոր մէջ սատանայ կայ: Վասնզի խեղճ քուրզը գողութիւն կընէ և անմիջապէս հեռու տեղ կիմացուի և կարգադրութիւն կը լինի, որ բոնեն զինք: անի կը զարմանար, ի՞նչպէս իմացուերէ: Խեղճը կը կարծէր թէ սատանայ կայ և կոկսէր մասսել կը քանզէին, կը կոտրէին, տէրութիւնը միջոցներ ձեռք առաւ, մի քանիսներուն պատժեց: Տիմա հեռագիրը հանդարտ կը բանէ, քուրզն էլ հասկցաւ որ անոր մէջ խելք կայ: Ես էլ գիտեմ՝ որ գիտութեան մէջ խելք կայ, մարդիկ կաշխատեն ամեն բանի գաղտնիքն իմանալ անոր խորհուրդը բացատրել: անոնք կուզեն երկնքի աստղերը դիտել, քննել, տեսնել թէ անոնց մէջ էլ մարդիկ կան, կեանք կայ, մեր երկրագնդին նման, թէ պարապ բաներ են: սակայն Աստուած պարապ բաներ չե ըներ: մարդիկն են որ պարապ բաներ կը շինեն: Գիտութիւն կը սովորցունէ օգտակար բաներ մանուկներուն: օրինակ, մանուկին մէկը շատ աղէկ սորված է քիպրիտ (լուցկի) շինել: անի գիտէ աղոր համար պէտք է մեքենայ, փոսֆոր: այդ գիտենալը լաւ բան է, բայց մենակ իմանալը առանց գործադրել կարենալու, իմացողին հաց չետար: Պարզ կը խօսիմ, որ ամենքնալ հասկնան: Իմացած եղէք գիտութիւնը իւր տեղն ունի: Անշափ մարդիկ զնացել Եւրոպայ գիտութիւն սովորել են, բայց վերջը քաղցած կը պըտըտին: չեն կրնար իրենց սովորածը գործադրել: Պօլիս եղած ատենս մէկ այդպէս երի-

տասարդ եկաւ ըսաւ. «Հայրիկ, մեքենագէտ եմ, բայց  
գործ չեմ գտներ», բարերարներ չկային, որ անոր  
օգնէին. խեղձը պզտիկ նաւակ էլ չը կրցաւ շե-  
նել: Ուրիշ մէկն ալ եկաւ՝ ըսաւ «շեմի սովորեր եմ,  
ֆիզիք սովորեր եմ», բայց նա էլ գործ չգտաւ,  
երկուքին մէջ էլ իրենց սովորած գիտութիւննե-  
րըն մեռան. վերջէն գացին փոքրիկ գործ մը  
սկսեցին և հաց գտան: Գիտութիւն այնչափ պիտի  
սովորենք, ինչ չափ այդ գիտութիւն հայ ժողովրդին  
պէտք է. իրաւ է, աղէկ է որ մենք սովորենք շատ  
մը բաններ, և ժողովրդին հասկացնենք, թէ այս հո-  
գը ի՞նչ յատկութիւն ունի. կրային է, կաւային է,  
որ անոր համեմատ գիտնան երկիր մշակել: Վեր ժո-  
ղովուրդ երկրագործ է, այդ բաններ նա գիտէ փորձով.  
գիտէ թէ որ մի տեղ քանի մը տարի խոտ կամ կորն-  
կան ցանես և այն հնձես և քանի մը անգամ այն  
հնձելէն վերջ տեղը վարես և ցորեն ցանես առատ  
բերք կտայ: Ես էլ երկրագործ եմ: Հայրիկ այս իւր  
երկրագործական փորձերէն կրու, Ա արակայ վանք  
երեսուն տարի երկրագործութիւն ըրած եմ: Հիմա  
ալ եկեր Արարատեան դաշտ պիտի հերկեմ: չգի-  
տեմ Հայրիկի գութանը պիտի վարի, թէ խոփը  
քարին պիտի զարնէ: Կը յուսամ որ ինձի կօգնեն,  
մէկը լուծի վերայ նստելով, միւսը խուրիկի վերայ  
նստելով. վերջապէս ամենն էլ ինձ օգնելով դաշտը  
կը վարենք. չէ, եթէ գութանս կոտրած մնայ, վայ  
ինձ. էլ ինձի ուրիշ բան չմնար. նստել ջարդուած  
գութանիս վերայ ողբալ:

Հնական գիտութիւններն՝ շեմի, ֆիզիք այնչափ

պիտի առնենք, որչափ մեզի պէտք են. իսկ ինչ որ մեր երկրին համար չէ, այդ պիտի թողնենք: Կան այնպիսի գիտութիւններ, որոնք տակաւին մայրաքաղաքներ չեն կրցած գործ դնել, ուր մնաց մեր խեղճ ժողովուրդ: Անոր համար կարեոր է հող. այս քանի օր երկու հարիւրէն աւելի խնդիրներ ստացեր եմ, կը գանգատեն թէ հող չունինք. ժողովուրդ շատացեր, հողը սակաւացեր է: Ճողովրդին սովորեցնելու է, թէ ինչ եղանակով կրնան քիչ հողէն պէտք եղած արդիւնքն ստանալ: Երկրագործական արհեստ մեզի համար շատ կարեոր է, աղոր հետ էլ յարակից գիտութիւնները ունենալ աղէկ է:

Գրանք Շեմարանի բուն նպատակին: Ամեն ժամանակ ազգէն տրտունջ կլսենք, թէ ազգը կառավարող առաջնորդներ չունի, քարոզել վարդապետներ չունի: Որուսաստանի մէջ երկու հազար քահանաներն մեծաւ մասամբ տգէտ են. հանգուցեալ կաթողիկոսը այս բաներ լսեր է, մտածեր է, տեսեր է ժողովրդի տխուր վիճակ, ուստի շիներ է այս հաստատութիւն, որ այստեղէն դուրս գան ուսեալ քահանաներ, վարդապետներ, վարժապետներ: Ա, արքէք ուրիշ բան չէ ուզած. անի միայն մէ՛կ ձիւղ ունի. օգտակար են երբեմն նաև երկրագործական պարզ դասեր տալ: Պ. Սաղաթէլեան կուզէ մեր Շեմարանը նորէն մկրտել, աշխարհական ընել. շատ շնորհակալ կրլանք, եթէ կարենանք ինչ որ մեզ հարկաւոր են այստեղ պատրաստել. այն է առաջնորդներ, քահանաներ, ուսուցիչներ. ինչո՞ւ այստեղէն պէտք է շինեն կաթողիկոսներ, ան ատեն կաթու-

զեկոսական կոխներ տեղի չէին ունենալ։ Մեր պատմութենէն կիմանանք, որ Երարատեան երկրէն, Հայաստանի մեջէն արժանաւոր կաթուղիկոններ ելեր են. թէև եղած են նաև Պատիթ և Դանիէլեան կոփիներ։ Աւրեմն Շեմարանի համար մի պարտականութիւն կայ. ազգին համար եկեղեցականներ պատրաստել. մենք չենք կրնար այստեղէն պրօֆեսօրներ, աստեղագէտներ հանել, վաճառականներ հանել։ Հազիւ կրաւէ երբ մենք մեր պարտքը կատարենք. մեր նպատակն է հոգևորական, վարժապետ, քահանայ պատրաստել։ Եյս Տիմնարկութիւն շատ փոքր է. հազիւ կը բաւէ, կը տեսնես մէկ հոգի ելեր, ժողովրդի կողմէն բաժին կուղէ, կուղէ այնպիսի մարդ ելլայ այստեղէն, որ գնայ ժողովուրդ կառավարէ, մեր ծրագիր յայտնի է. այդպէս բաներ չունինք. մենք կարմիրնենք ինչ մեզ պէտք է; Ունինք տասնը հինգ վարժապետներ, տասնը հինգ ալ վրայ դնենք, ուր կերթայ. Եւրոպայում էլ շատ բաներ կը նեն. բարձր տեղեր դիտանոցներ կը շինեն, աստղեր կը դիտեն, մենք ալ բարձր լեռներ ունինք, թէ որ մտածենք այդ լեռներուն վերայ դիտարաններ շինել, աղէկ բան է, բայց մեր ուժէն շատ վեր է։ Թող տանք, ան մարդիկ կառավարութեան նպատներով շատ բան կանեն. Հայու համար աստղաբաշխութիւն աւելորդ բան է։ Ես ամենէն աւագ բոլոր արարատեան ժողովրդի համար կմտածեմ. գիտեմ որ ազգին զիտութիւն էլ պէտք է, անոնք որ մայրաբաղաքներու մէջ կապրին, կը նաև երթալ զիտութիւն ձեռք բերել, մեր ճեմա-

բան պիտի վարդապետ, քահանայ, վարժապետ տայ, ուստի, պ. Աաղաթէլեան, այս ծրագրէն դուրս չելնես. Եւրոպայ, իդէալ անհասկանալի բաներ են մեզ պէտք չէ: Գաղափարը ըսել կուզես, թէ ուրիշ բան. մեր հայերէն լեզուն ամեն տեսակ բառեր ունի իւր մէջ, այդ բառեր գործածելու է: Վ, յժմ գեռ ժամանակ չէ. Երբ պէտք լինի գիտութեան ճեմարան ալ կունենանք, բայց թող այդ մասին հարուստ մարդիկ մտածեն. Թող բազուեցին հոգայ, թիֆլիզեցին. խեղճ վանականներս ի՞նչ կրնանք ընել: Պ. Աաղաթէլեան գիտութիւն, գիտութիւն ըսելով, մեր փոքրիկ զրամադրեցին մէջքը կուզէ կոտրել. ես աս բաներ Աթանալոլէն սերտեր եկեր եմ այստեղ:

Կտեսնեմ որ շրջանակէն դուրս ելանք, հեռացանք: Պօլիս եղած ժամանակու երբեմն սահմանադրութեան շրջանակը ինձի նեղ կուգար, և երբեմն շրջանակէն դուրս կենէի: Ես յատկապէս կը խնդրեմ, այս մի խեղճ վանական դպրոց է, թէ և անունը ճեմարան են դրել, փոքրիկ շրջանակ ունի. մեր առարկաներ յայտնի են թէ ի՞նչ պիտի սովորցնենք:

Վ, իս, մի՛ մեղադրէք, ցաւելով կը տեսնեմ մեր հոգևորականների վիճակ. ժողովրդին մէջ սկսելէ անհետանալ կենդանի հաւատք, ցամաքելէ աւետարանի զօրութիւն, պատուէրներ: Ենք պարտքն է աշխատել ժողովրդին քրիստոնէական ճամբին վերայ պահել, դուք ալ, վարժապետներդ, մեզի պիտի համակերպիք. ես ձեզի վարդապետ կը ճանչնամ, ձեր պաշտօն այդպէս պիտի հասկնաք և ճշտութեամք պիտի կատարէք. համաձայնեցէք: Գիտեմ,

կը խոստովանիմ ես էլ իմ նախապաշարմունք ու-  
 նիմ. կը կարծէք Հայրիկ գիտութեան բարեկամ չէ.  
 սխալէք, շատ տարաժամէ. ամեն բանի մենք չենք  
 կրնար համնել: Վենք այս եկեղեցական պաշտօ-  
 նեաներս զինւորական բանակ ենք, և մեզի օգնա-  
 կաններ պիտի պատրաստենք այստեղ: Ըոլորս էլ  
 պիտի եկեղեցու պէտքերն հոգանք: Վւետարանին  
 մէջ կկարդանք, որ Հոգին Սուրբ իջաւ վերնատուն,  
 Քրիստոս այդ եղանակով սորվեցուց ամեն բան:  
 Եյժմ աշխատութիւն պէտք է, միայն աշխատու-  
 թեամբ կրնանք ձեռք բերել, ինչ որ մեզ հարկա-  
 ւոր է, պէտք է շատ աշխատենք. այս Ճեմարանն  
 ալ մեր վերնատունն է: Գիտեմ, մեր աշակերտներ  
 պիտի գնան ժողովրդի մէջ գործեն, որչափ շատ  
 բան իմանան, այնքան աղէկ կը լինի. օրինակ շատ  
 փափաքելի է, որ մեր աշակերտներ լեզուներ իմա-  
 նան կեանքի մէջ դիւրութիւններ կունենան:  
 Քանի մը օր առաջ անգլիացի մը եկած էր  
 և անգլիերէն կը խօսէր, բայց մեր վարդապետնե-  
 րէն մէկն էլ անգլիերէն չգիտէր. բայց անիկա ու-  
 րիշ լեզուներ էլ գիտէր. գերմաներէն գիտէր, գա-  
 ղիերէն գիտէր: Ինչ աղէկ բան կլինէր, որ մեր վար-  
 դապետներ էլ լեզուներ իմանային: Են մարդ եկեր  
 աշխարհ կը թի, նախապէս լեզուներ սովորել, ապա  
 եկեր է: Վենք Պարսից հարեաններ ենք. հին ժամա-  
 նակ իրարու շատ մօտ էինք: Պարսկաստանի ոխ-  
 տաւորները եկեր առաջնորդ կուղէին. իրենց հետ մէկ  
 քանի թուղթեր էլ բերեր էին և ըսին որ այսուհետեւ  
 այդ ձեւերուն համաձայն գրութիւններ պէտք է կտ-

տարուին. այնտեղ էլ երեսուն տարի առաջինչպէս որ կը գրէին, հիմա այնպէս չեն գրեր, ձեերը փոխուած են: Ենոնք այդ թղթերը ձգեցին գացին. ես այն կը մտածեմ, ով պէտք է գրէ այն ֆարսերէն բաները. Երևան պիտի խաւրեմ զրել տամ. ինչ աղէկ կը լինէր, եթէ մեր վարդապետներէն մէկը ատով դրաղուէր և ֆարսերէն գիտնար:

Այս չափս բաւական է: Կը յուսամ թէ ամենքդ էլ ըմբռնեցիք, թէ Հայրիկ ինչ կուզէ ըսել. ամեն բան իւր ժամանակն ունի: Շատ շնորհակալ եմ: չեմ մոռնար վարժապետներ, աշակերտներ. ամենքդ էլ աշխատեր էք, թէև երբեմն բաներ կը խօսեմ, բայց ի սրտէ ձեզի կը սիրեմ: Աշխատեցէք իմաստակութիւն չընել, իդէալ ևն. վերացական բառեր թողէք: Իմ շնորհակալութիւնս նախ և առաջ մինչև հիմա եղած վերատեսուչներուն, ուսուցիչներուն, որոնք կաշխատեն Շեմարանը առաջ տանել, ուսուցանել: Ուսուցանել սոցա կը նշանակէ նորէն ստեղծել. Աստուած միանգամ Էմարդս կստեղծէ. բայց մայրը կը մնուցանէ և ուսուցիչը կը սովորցնէ. եթէ ատոնց ինսամքը չը լինէր, վայրենի կը մնայինք: Ես կ'աղօթեմ ուսուցչաց համար, Աստուած տայ անոնց կարողութիւն, զօրութիւն, որ իրենք կատարեն ճշտութեամբ իրենց պաշտօն: Դուք էլ մեզի համար աղօթէք, որ կարողանամ պահպանել այս հիմնարկութիւն: Հայրիկին աւանդ մըն է այս. թող Աստուած հաստատուն պահպանէ այս աւանդը ի փառս Հայաստանեայց եկեղեցու»:

Խօսակցութեան ժամանակ Վեհափառը երբեմն կանգնում,

երբեմն նատումէր և կարծես աւելի զրուցագրութիւն էր նորա խօսածը, քան ճառ: Վեհափառի ձգումն է իւր խօսածները ամեն ոք հասկանայ, ուստի խօսումէր պարզ և անպահով եղանակով:

Խօսելուց յետոյ Վեհափառը պահպանից առաց և ապա գոտնալով շուրջ բոլոր կանգնած եղիսկոսուներին ու վարդապետներին առաց: «Ա արդապետներ, ձեզի էլ կարողութիւն կը մաղթեմ որպէս զի ինձի հետ միացած գործէր. ձեզնից ամեն մէկը կաշխատէ այս Շեմարանի համար: Մէկն իբրև տնտես, երկրորդն երբեւ մատակարար և այն. Եշարհիս մէջ ամեն բան օգնութեամբ կը լինի, թագաւորներն էլ առանց օգնութեան ոչինչ չեն աներ, անոնք թուղթ կսորագրեն, բայց գործադրողները իւր պաշտօնեաններն են: Մարդս մենակ կրնայ մի բան ընել՝ իւր սենեակին դուռը գոցել և գրել. ‘Նա մենակ ուրիշ ոչինչ չըներ»:

Հոնդիսի մերժանալուց յետոյ երբ Վեհափառը ցած իջաւ և հեռացաւ, բոլոր ներկայ եղողները ոկտեցին կոչել ոկեղցէ Վեհափառ Հայրիկ. և ծափոհարել: Հեռացաւ Վեհափառը ուրախ տրամադրութեամբ, իսկ աշուկերտները սկսեցին երգել «Հայրիկ Հայրենիք վասպուրական».... երգը:

**ՄԵՍՐՈՊ ԱԲԵԴԱՅ ՏԷՐ-ՄԱՎՍԻՍԵԱՆ.**